Արձանագրություն N 2

**ԱՔ- ԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Արմավիր 02 ապրիլի 2026թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լիանա Հայրապետյան |
| Հանձնաժողովի Գնահատող անդամներ՝ | Հովհաննես Առաքելյան, Սյուզաննա Իսախանյան |
| Բացող անդամներ՝ | Իրինա Գալստյան, Օքսաննա Պետրոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Սաղաֆ Զորաբյան |

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

(Լիանա Հայրապետյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ԱՔ-ԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերի մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0***

## 2. ԱՔ-ԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Լիանա Հայրապետյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե, Հեռախոս | Էլ. Փոստի հասցե |
|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ Արտակ Մարտիրոսյան | Գեղարքունիքի մարզ, գ.Գեղաքար, 2 փողոց, 4 տուն, Հեռ.՝ 094008006 | artak.martirosyan.2022@inbox.ru |
| 2 | «Վերտիկալ» ՍՊԸ | ՀՀ գ. Շիրակի մարզ, գ. Լուսաղբյուր 3-րդ փ., 14տ., Հեռ.՝ 099165858 | vertikale.llc@gmail.com |
| 3 | «Վանտեխ» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Անդրանիկի փ 7, Հեռ.՝ 093557381 | vanik.harutyunyan.45@mail.ru |
| 4 | ՂՈՒԿԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱԿՈԲԻ Ա/Ձ | Արմավիր 1117 Ալպագա 8Փ/Տ/58, Հեռ.՝ 094100248 | tikoejmiadzin@mail.ru |
| 5 | «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ | Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14, Հեռ.՝ 0600090 | gritig@inbox.ru |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին

(Լիանա Հայրապետյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են, բացառությամբ **«Վերտիկալ» ՍՊԸ-ի, «Վանտեխ» ՍՊԸ-ի, ՂՈՒԿԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱԿՈԲԻ Ա/Ձ-ի, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի,** մասնավորապես՝ **«Վերտիկալ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված է 1 հոգուց բաղկացած աշխատակազմ, այնինչ պետք է լինի առնվազն 2 հոգուց բաղկացած, **«Վանտեխ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված է 1 հոգուց բաղկացած աշխատակազմ, այնինչ պետք է լինի առնվազն 2 հոգուց բաղկացած, ինչպես նաև կցված չէ նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր, **ՂՈՒԿԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱԿՈԲԻ Ա/Ձ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերում կցված չէ աշխատակազմում ներգրավված

Անդրանիկ Շահվերդյանի անձնագիրը, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ **«Վանտեխ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի**, մասնավորապես՝ **«Վանտեխ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Դիմում-հայտարարության վրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է, **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Դիմում-հայտարարության վրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:***

## 4. Անհամապատասխանությունները շտկելու մասին

(Լիանա Հայրապետյան)

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել **«Վերտիկալ» ՍՊԸ-ին, «Վանտեխ» ՍՊԸ-ին, ՂՈՒԿԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ Ա/Ձ-ին, «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին,** որոնք պետք է ներկայացնեն շտկված փաստաթղթերը մինչև 06.04.2026թ. 12:00-ն ներառյալ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Լիանա Հայրապետյան)

ԱՔ-ԳՀԾՁԲ-26/14 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ապրիլի 06-ին ժամը 12:00-ին Արմավիրի համայնքապետարան, ք. Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լիանա Հայրապետյան

անդամներ՝ Հովհաննես Առաքելյան

Սյուզաննա Իսախանյան

Իրինա Գալստյան

Օքսաննա Պետրոսյան

Քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան